



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

05.10.2014թ. N \_\_\_\_\_

*Միրելի՛ մանկավարժներ,*

Մրտանց շնորհավորում եմ բոլորիդ՝ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ:

Մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործում ցուցաբերած ձեր անմնացորդ նվիրումը Մայր հայրենիքին անխոնջ ծառայելու պանծալի օրինակ է և, անտարակույս, արժանի համընդհանուր սիրո, խոր ակնածանքի ու դրվատանքի:

Արդի դարաշրջանում, երբ մեր երկրի հուսալի անվտանգության ապահովման, հզորացման ու հարաճուն զարգացման ռազմավարական ծրագրերում առանձնահատուկ դեր է վերապահվում կրթությանը և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ, ազգային ու պետական մտածելակերպով օժտված հայրենապաշտ քաղաքացու ձևավորմանը, էլ ավելի է կարևորվում ձեր կոչումն ու առաքելությունը:

Համոզված եմ, որ դուք հավատարիմ կմնաք մաշտոցյան սրբազան ուխտի պատգամներին, և ապավինելով ձեր սերմանած ոգեղեն լույսի գործությանը՝ մենք միասնական ուժերով կյանքի կկոչենք մեր ժողովրդի ազգային բաղձանքները:

Թանկագի՛ն ուսուցիչներ,

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ ձեզ և մաղթում առողջություն, անձնական երջանկություն, ընտանեկան բարեկեցություն, անսպառ եռանդ, ամենայն բարիք և ամենանվիրական իղձերի իրականացում :

Հարգանքներով՝

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ